ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3
"24" հոկտեմբերի 2025թ. N 3196-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 24 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 24 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

23.11.2025

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Подписано: SIMONYAN ARMEN 4003890647 **/Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
«29» 11 2025թ.
N 319-Ա հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 24

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

24.10.2025թ. ք. Երևան

2025թ. հոկտեմբերի 24-ին ժամը 09:30-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի հատուկ նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյան
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Ա. Խաչատրյանը
Կ. Մկրտչյանը
Տ. Գասպարյան

Օրակարգում՝

1. ՀՀ Արարատի մարզի միասնական երթուղային ցանցի սպասարկման իրավունք ստացած «Ռեգնում» ՍՊ ընկերության կողմից հայտ-պարտավորությամբ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցների ներկայացնելու ժամկետի երկարաձգման հարցը:

Քննարկվեց՝

1. ՀՀ Արարատի մարզի միասնական երթուղային ցանցի սպասարկման իրավունք ստացած «Ռեգնում» ՍՊ ընկերության կողմից հայտ-պարտավորությամբ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցների ներկայացնելու ժամկետի երկարաձգման հարցը:

Արձանագրվեց՝

1.Ռեգնում ՍՊ ընկերությունը ս.թ. մարտի 31-ին կնքված ժամանակացույցի պայմանագրով սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտ-պարտավորությամբ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցները:

2.Ընկերությունը ս.թ. հոկտեմբերի 9-ին դիմում է ներկայացրել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և խնդրել ժամանակացույցի պայմանագրով փոխադրամիջոցները ներկայացնելու սահմանված ժամկետը երկարաձգել, սակայն ընկերությունը չի հիմնավորել անհաղթահարելի ուժի հանգամանքները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 03.12.2020թ. թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 83.1 կետի պահանջներով՝

Որոշվեց՝

1.Հայտ-պարտավորությամբ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցների ներկայացնելու պարտավորությունները չկատարելու հիմնավորմամբ «Ռեգնում» ՍՊ ընկերությանը զրկել Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկելու իրավունքից:

2. Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության նոր մրցույթ:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Կ. Մկրտչյան

Տ. Գասպարյան